ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Վ. ԽԱՐՄԱՆԴԱՐՅԱՆ (Մոսկվա)

ՍՍՀՄ կազմավորումը ազգային հարցի սկզբունքորեն նոր լուծում էր մարդկության պատմության մեջ։ Ի հակադրություն այդ հարցի բուրժուական դրվածքի, որին բնորոշ է ազգերի անջատումը՝ մանր պետությունների կազմավորումը կապիտալիստական շահագործման և ազգային ու ռասայական խտրականության պահպանման պայմաններում, ազգային հարցի լուծման սովետական եղանակին հատկանշական է խոշոր պետության մեջ ժողովուրդների ազատ միավորումը։ Այդ կամավոր միավորման նպատակն էր ստեղծել սովետական ժողովուրդների հզոր պետական-քաղաքական միություն՝ հանուն սովետական իշխանության զարգացման և սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման համատեղ պայքարի։

Բազմազգ սոցիալիստական պետության կազմավորումը սովետական բոլոր ժողովուրդների հեղափոխական ստեղծագործական ջանքերի արդյունքն էր։ Այդ բանը կատարվեց կոմունիստական կուսակցության կողմից ղեկավարվող բանվոր դասակարգի գլխավորությամբ։ Կոմունիստական կուսակցությունն էր ժողովուրդների ինտերնացիոնալ եղբայրության քաղաքականության ղեկավարն ու կազմակերպիչը, նա էր համախմբում ժողովուրդներին բանվոր դասակարգի հիմնական սոցիալական խնդրի՝ կոմունիստական հասարակության կառուցման իրականացման համար մղվող պայքարում։

ՍՍՀՄ կազմավորումը կոմունիստական կուսակցության տեսական աշխատանքի արդյունքն էր։ *Լենինի և նրա ստեղծած կոմունիստական կուսակցության մշակած հեղափոխական թեորիան, ազգային հարցի ծրագրային դրույթները, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և սովետական ֆեդերալիզմի սկզբունքները դարձան ՍՍՀՄ կազմավորման պրոցեսի տեսական հիմքը։ Ռուսաստանի բանվոր դասակարգը և նրա հեղափոխական կուսակցությունը հանդես եկան որպես ազգային հարցի արդարացի լուծման, ժողովուրդների ազգային ինքնուրույնության հետևողական պաշտպաններ։*

Վ. Ի. Լենինը մեծ ուշադրություն էր նվիրում ազգային հարցին, Ռուսաստանում նրա կոնկրետ արտահայտություններին։ Նա պահանջում էր ազգային հարցի հստակ ձևակերպում և լուծում, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և բուրժուական նացիոնալիզմի՝ այդ երկու տրամագծորեն հակադիր լոզունգների որոշակի սահմանազատում։ Լենինի կուսակցությունը հանդես էր գալիս որպես աշխատավորության ինտերնացիոնալ համախմբման դրոշակակիր։ Ազգային հարցում Լենինը, կոմունիստական կուսակցությունը միշտ էլ պայքարել են երկու ճակատով՝ ընդդեմ մեծապետական շովինիզմի և տեղական բուրժուական նացիոնալիզմի։ Ըստ որում Լենինը գտնում էր, որ տիրապետող

ազգի կոմունիստների առաջնահերթ խնդիրն է պայքարել նախ և առաջ մեծապետական շովինիզմի արտահայտությունների դեմ և ընդգծել յուրաքանչյուր ժողովրդի անջատման իրավունքը՝ ընդհուպ մինչև ինքնուրույն պետություն կազմելը, իսկ ճնշված ազգի կոմունիստների պարտքն է հանդես գալ տեղական նացիոնալիզմի արտահայտությունների դեմ և պաշտպանելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, ձգտել ոչ թե անջատման, այլ ժողովուրդների ազատ, կամավոր միավորման։ Այս ինտերնացիոնալիստական սկզբունքների կենսագործումը ժողովուրդների միավորիչ շարժման և ՍՍՀՄ կազմավորման հզոր խթան հանդիսացավ։ Ազգային հարցի վերաբերյալ իր ծրագրային դրույթները Լենինի գլխավորած բոլշևիկյան կուսակցությունը պաշտպանեց՝ անհաշտ պայքար մղելով «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» մասին II ինտերնացիոնալի հռչակած ռեակցիոն գաղափարի դեմ, որը Ռուսաստանում պաշտպանություն գտավ մենշևիկների, բունդականների, լեհական, լիտվական, լատիշական, ուկրաինական, անդրկովկասյան և այլ նացիոնալիստների կողմից։

«Այդ ծրագրի հիմնական, սկզբունքային սխալն այն է,— նշել է Վ. Ի. Լենինը,— որ նա ձգտում է կյանքի մեջ մարմնավորելու ամենանրբին և ամենարացարձակ, մինչև վերջը հասցրած նացիոնալիզմը»[1]։

Սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղված պայքարում կոմունիստական կուսակցության ստրատեգիայի և տակտիկայի հիմքում ընկած էին պրոլետարական ինտերնացիոնալիզմի լենինյան գաղափարները, որոնք օգնում էին բոլշևիկներին հաջողության հասնել երկրի բոլոր ազգերի և ազգությունների աշխատավորության համախմբման գործում։ Ցարիզմի և բուրժուազիայի դեմ ամբողջ Ռուսաստանի պրոլետարիատը հանդես էր գալիս որպես միասնական ինտերնացիոնալ ուժ։

ՍՍՀՄ կազմավորումը կոմունիստական կուսակցության գաղափարական աշխատանքի արդյունքն էր։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, բանվորա-գյուղացիական սովետական իշխանության հաղթանակը, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը, արտադրության միջոցների հանրայնացումը այն բաղադրիչներ էին, որի հիման վրա հնարավոր էր դառնում ժողովուրդների եղբայրական համագործակցությունը մեկ պետության մեջ։ Միայն սոցիալիստական հեղափոխությունն ապահովեց բանվոր դասակարգի գլխավորությամբ ժողովրդական բոլոր ուժերի սերտ միավորումը կապիտալիստական շահագործման սիստեմը, ազգային ճնշումը վերացնելու նպատակով, որն անհրաժեշտ պայման էր դեմոկրատական, սոցիալիստական հիմունքներով ազգերի միավորման համար։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը արմատական սոցիալ-տնտեսական վերափոխումների, ազգային հարցում լենինյան ծրագրի իրագործման, ազգային սովետական հանրապետությունների առաջացման և մի եղբայրական ընտանիքում նրանց միավորման գլխավոր քաղաքական գործոնն էր։

Ռուսաստանի նման բազմազգ պետության մեջ ազգային հարցը հանդես էր գալիս որպես սոցիալիստական հասարակության կառուցման արմատական խնդիրներից մեկը, որի ճիշտ լուծումից մեծապես կախված էր նոր հասարակարգի բախտը։ Ազգային քաղաքականության իրագործման ուղղու-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 22։

թյամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ձեռնարկած միջոցառումները ժողովուրդների իսկապես հեղափոխական միասնություն էին ստեղծում և մեծ նշանակություն ունեին ամբողջ երկրում, նախկին ցարական Ռուսաստանի ազգային ծայրամասերում սովետական իշխանության հաղթանակի համար։ Այդ միջոցառումները ազատ, կամավոր միության մեջ միավորվելու նպատակով ժողովուրդների և սովետական հանրապետությունների շարժման սկիզբը դրեցին և նրա զարգացման հիմքը հանդիսացան։

Սովետների համառուսաստանյան II համագումարը իշխանությունը վերցնելուց հետո «բանվորներին, զինվորներին և գյուղացիներին» կոչի մեջ հանդիսավորությամբ հայտարարեց Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին ինքնորոշման իրավունք տալու մասին։ Ժողովրդական Կոմիսարների Սովետը, Լենինի գլխավորությամբ 1917 թ. նոյեմբերի 2 (15)-ին ընդունեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որով հռչակվում էր Ռուսաստանի ժողովուրդների իրավահավասարությունն ու սուվերենությունը, նրանցից յուրաքանչյուրի ազատ ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև անջատվելն ու ինքնուրույն պետություն կազմելը։ Վերացվում էին բոլոր և ամեն տեսակի ազգային և ազգային-կրոնական արտոնություններն ու սահմանափակումները։ Ռուսաստանում բնակվող ազգային փոքրամասնություններն ու ազգային խմբերն ազատ զարգացման հնարավորություն էին ստանում։

Ժողկոմսովետը մեծ ուշադրություն էր դարձնում այդ սկզբունքների կենսագործմանը. ժողովուրդների զարգացման, նրանց եղբայրական մերձեցման ուղղությամբ ունեցած մշտական հոգատարությունը դառնում է սովետական պետական քաղաքականության անխզելի մասը։ ՌՍՖՍՀ՝ առաջին սովետական ֆեդերատիվ հանրապետությունը, հանդես էր գալիս որպես համախմբող ուժ մեկ միասնական սովետական պետություն ստեղծելու ուղղությամբ ընթացող միավորիչ շարժման մեջ։ Բոլոր սովետական հանրապետությունները իրենց սահմանադրությունների համար որպես նախատիպ ընտրում էին ՌՍՖՍՀ սահմանադրությունը։ Ազգային հարցի գործնական լուծումը Ռուսաստանյան Ֆեդերացիայում հսկայական նշանակություն ուներ ՍՍՀՄ կազմավորման համար մղվող միավորիչ շարժման մեջ։

ՍՍՀՄ կազմավորումը սովետական ժողովուրդների բազմակողմանի փորձի արդյունքն է, այդ թվում նաև հանուն սոցիալական և ազգային ազատագրման մղած համատեղ պայքարի պատմական փորձի արդյունք։

Ռուսական կայսրության ժողովուրդների ազատագրական, հեղափոխական պայքարը կազմակերպված և նպատակասլաց բնույթ ստացավ լենինյան կուսակցության ստեղծումից հետո։ Դասակարգային պայքարի բովում ամրապնդվում էր բոլոր ազգերի պրոլետարների մարտական միասնությունը, ծընվում էր բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքը։ Կուսակցությունը մեկ ընդհանուր հոսանքի մեջ միավորեց տարբեր հեղափոխական շարժումները՝ բանվորականը, գյուղացիականը և ազգային-ազատագրականը։ Հոկտեմբերյան հեղափոխության ընթացքում ռուսաստանյան պրոլետարիատը հանդես եկավ բոլոր ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի իսկական հեգեմոնի դերում։

Բոլոր ազգերի աշխատավոր զանգվածները, կենտրոնական Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակով ոգեշնչված, Լենինի կու-

սակցության ղեկավարությամբ իրենց մոտ սովետական իշխանություն էին հաստատում։ Իրականացնելով ինքնորոշման իրավունքը, նախկին ցարական Ռուսաստանի ժողովուրդները կազմում էին սովետական հանրապետություններ։

Նախկին իշխող դասակարգերի, բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների, օտարերկրյա ինտերվենտների հակասովետական կոալիցիան երկիրը ներքաշեց քաղաքացիական կռիվների հորձանուտի մեջ։ Ըստ որում հատկանշական է, որ եթե մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը բուրժուա-նացիոնալիստական հակահեղափոխական կուսակցությունները կողմնակից էին «միասնական անբաժանելի» բուրժուական Ռուսաստանի և ձգտում էին սոսկ ներքին ինքնավարության, ապա սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո նրանք, իրենց դասակարգային շահերից ելնելով, գնացին քաղաքական և ազգային սեպարատիզմի ուղիով, վերածվեցին Սովետական Ռուսաստանից անջատվելու և մանր, ազգային բուրժուական պետությունների տրոհվելու կատաղի կողմնակիցների։ Դա հակաժողովրդական քաղաքականություն էր, քանի որ դեմ էր գնում ժողովուրդների հզոր միավորիչ շարժմանը, որը Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի հետևանքն էր։

Ժողովուրդների միավորիչ շարժումը ամենևին էլ տարերային չէր, նրան ուղղություն էր տալիս և գլխավորում էր կոմունիստական կուսակցությունը, որի համար պարզ էին միասնական սովետական պետության կազմավորման պատմականորեն պայմանավորված լինելը և հասունացած անհրաժեշտությունը։

ՍՍՀՄ կազմավորման տնտեսական ազդակը ժողովուրդների ձգտումն էր դեպի խաղաղ սոցիալիստական ստեղծագործ աշխատանքը, իրենց փաստական անհավասարության վերացումը, սոցիալիզմի, կոմունիզմի կառուցումը։ Դա պահանջում էր սովետական հանրապետությունների ավելի սերտ միավորում։ Միայն բոլոր հանրապետությունների համատեղ ջանքերով հնարավոր կլիներ վերականգնել պատերազմի հետևանքով քայքայված արտադրողական ուժերը՝ հենվելով արտադրության փոխադարձաբար օգտավետ մասնագիտացման, աշխատանքի բաժանման և բնական հարստությունների էֆեկտիվ օգտագործման վրա։ Միայն սովետական հանրապետությունների սերտ միությունը կարող էր ապահովել աշխատավորների բարեկեցության արագ աճը, բոլոր ազգերի և ժողովուրդների բազմակողմանի զարգացումն ու մշակույթի ծաղկումը։ Կապիտալիստական շրջապատման պայմաններում, առանց սովետական հանրապետությունների սերտ միության անհնար էր պահպանել նրանց գոյությունը։ Սովետական հանրապետությունների միավորումն անհրաժեշտ էր նաև սոցիալիստական շինարարության ամենից ավելի էֆեկտիվ ուղիներ մշակելու նպատակով տնտեսական պլանավորման ընդհանուր սիստեմի կազմակերպման համար։

Այսպիսով, 1922 թ. սովետական հանրապետությունների միավորիչ շարժումը դուրս եկավ պայմանագրային հարաբերությունների փուլից և թևակոխեց բազմազգ սովետական պետության կազմավորման փուլը. սովետական հանրապետությունների պետական-քաղաքական միավորումը օրակարգի հարց դարձավ։ ՍՍՀՄ կազմավորումը նախապատրաստված էր սովետական հանրապետությունների փոխհարաբերությունների փորձով։ Սակայն կազմավորման բուն պրոցեսը բարդանում էր երկրի տնտեսական և կուլտուրական

հետամնացության, ազգային թշնամանքի մնացուկների, նացիոնալիզմի, կուսակցության ներսում նացիոնալ-ուկլոնիստների վնասակար գործողությունների հետ կապված մի շարք դժվարությունների պատճառով։

Սովետական բազմազգ պետության պետական կառուցվածքի ձևը գտնվեց Լենինի հանճարի շնորհիվ։ Լենինի և կոմունիստական կուսակցության տեսակետները սովետական ֆեդերացիայի մասին զարգացվում և լրացվում էին ազգային հարցի լուծման պրակտիկային համապատասխան։ Լենինը ղեկավարում էր սովետական հանրապետությունների ազգային-պետական շինարարությունը և դրա փորձի ընդհանրացման հիման վրա սովետական ֆեդերացիայի ամրապնդման նոր ուղիներ էր որոնում։ Սա ընդգծում էր ավտոնոմ և անկախ սովետական հանրապետությունների ֆեդերատիվ կապերի էական տարբերությունը, որից բխում էր այդ կապերի զարգացման անհրաժեշտությունը։ Լենինը տվեց սովետական ֆեդերացիայի նոր, բարձրագույն ձևի գաղափարը, հիմնավորեց միութենական պետության կազմակերպման սկզբունքները։

ՍՍՀՄ կազմավորման լենինյան ծրագիրը նախատեսում էր իրավահավասար, սուվերեն հանրապետությունների կամավոր միություն՝ հետևողական սովետական դեմոկրատիզմի սկզբունքներով։ Սովետական կարգերի առկայության պայմաններում հանրապետությունների ինքնուրույնությունը և հավասար հիմունքներով նրանց սերտ միավորումը չէին հակասում միմյանց։ Այդ պատճառով Լենինը կտրականապես մերժում էր ինքնուրույնության բուրժուանացիոնալիստական ըմբռնումը (ազգային-պետական մեկուսացում, սեպարատիզմ) և գտնում էր, որ մեկ միութենական պետության մեջ սովետական հանրապետությունների միավորումը լիովին կպահպանի նրանց պետական ինքնուրույնությունը, կապահովի ժողովուրդների փաստական անհավասարության հաղթահարումը, նրանց կմոտեցնի սոցիալիզմին։

1922 թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայում կայացավ ՍՍՀՄ Սովետների I համագումարը, որը հիմնադրեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը։

Այսպիսով, կոմունիստական կուսակցության տեսական և քաղաքական գործունեությունը, սովետական հանրապետությունների ֆեդերատիվ կապերի ամրապնդման փորձը, ժողովուրդների ձգտումը դեպի միավորումը հանգեցրին միութենական պետության կազմավորմանը։

Սովետական հանրապետությունների միավորումը ՍՍՀ Միության մեջ հնարավորություն տվեց կենտրոնացնելու երկրի բոլոր ուժերը, հսկայական միջոցներն ու հարուստ ռեսուրսները սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման համար։ Ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը նրանց կուլտուր-տնտեսական զարգացման հզոր խթաններ դարձան։ Սոցիալիզմի հաղթանակը, սոցիալիստական ազգերի հսկայական հաջողությունները, նրանց բուռն, բազմակողմանի զարգացումը և միաժամանակ գնալով աճող մերձեցումը ազդում էին սովետական մարդկանց և ողջ մարդկության գիտակցության վրա, մեծապես ուժեղացնում սոցիալիզմի գաղափարների ձգողական ուժը։

ՍՍՀՄ կազմավորումը պատմական նշանակություն ունի ամենից առաջ սովետական հանրապետությունների ժողովուրդների համար, որոնք ընդհանուր պետական ընտանիքում իրենց անկախության և ինքնուրույնության հուսալի

երաշխիք և սոցիալիստական զարգացման համար նպաստավոր պայմաններ ստացան։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ պետք է ամրապնդել Սովետական Միությունը. «Դա մեզ հարկավոր է, ինչպես հարկավոր է համաշխարհային կոմունիստական պրոլետարիատին՝ համաշխարհային բուրժուազիայի դեմ պայքարելու և նրա ինտրիգներից պաշտպանվելու համար»[2]։

1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմը ամբողջ աշխարհին ապացուցեց ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների եղբայրական բարեկամության և մարտական համագործակցության անխորտակելի ուժը, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կայունությունը։ Միայն ՍՍՀ Միության մեջ համախմբված լինելով սոցիալիստական ազգերը կարող էին պաշտպանել իրենց ազատությունն ու անկախությունը ֆաշիզմի դեմ մղված կատաղի պայքարում։

Սովետական ֆեդերացիան, ինչպես վերն ասվեց, արմատապես տարբերվում է բուրժուական ֆեդերացիայից։ Սովետական դեմոկրատիզմի և ֆեդերալիզմի սկզբունքներն ապահովում են սովետական ազգերի բազմակողմանի ծաղկումն ու մերձեցումը։ «Անցած տարիներին կուսակցության ղեկավարությամբ նոր քայլեր արվեցին յուրաքանչյուր եղբայրական սովետական հանրապետության համակողմանի զարգացման ուղղությամբ, մեր երկրի ազգերի և ազգությունների հետագա աստիճանական մերձեցման ուղղությամբ։ Այդ մերձեցումը տեղի է ունենում ազգային առանձնահատկությունները ուշադրությամբ հաշվի առնելու, սոցիալիստական ազգային կուլտուրաները զարգացնելու պայմաններում։ Այդ հարցում կուսակցության քաղաքականության էությունն այն է, որ մշտապես հաշվի առնվեն թե՛ մեր ամբողջ Միության ընդհանուր շահերը և թե՛ նրա մեջ մտնող հանրապետություններից յուրաքանչյուրի շահերը»[3]։

Առանց մերձեցման զարգացումն անհնար է, առանց բազմակողմանի զարգացման՝ անհնար է մերձեցումը։ Սա է ազգերի փոխհարաբերությունների օբյեկտիվ օրենքը Սովետական Միությունում։ Այս միասնության ամենամեծ նվաճումներից մեկը սոցիալիստական շինարարության տարիներին Սովետական Միությունում ձևավորված սովետական ժողովուրդն է։

Այսպիսով, իր քաղաքական նշանակությամբ և սոցիալ-տնտեսական հետևանքներով ՍՍՀՄ կազմավորումը նշանակալի տեղ է գրավում սովետական պետության պատմության մեջ։ Այդ իսկ պատճառով ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակը մեր բազմազգ ժողովրդի մեծ տոնն է։

Միանգամայն հասկանալի է, որ ՍՍՀՄ փորձը դեպի իրեն է ձգում սոցիալական և ազգային ազատագրության համար պայքարող բոլոր ժողովուրդներին։ Դրա համար էլ ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակը մեծ տոն է ամբողջ առաջադեմ մարդկության համար։

Բազմազգ սոցիալիստական պետություն ստեղծելու սովետական փորձը մեծ ճանաչում գտավ միջազգային հեղափոխական շարժման կողմից և անգնահատելի օգնություն է ցույց տալիս նրան սոցիալական և ազգային ազատագրման համար մղված պայքարում։

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 36, էջ 704—705։

3 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարին, Երևան, 1971, էջ 118։

Վ. Ի. Լենինը բազմիցս խոսել է սովետական երկրում ազգային հարցի լուծման միջազգային նշանակության մասին։ Նա կանխատեսորեն նշել է, որ պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների հետևողական իրականացումը հսկայական դեր կխաղա իմպերիալիզմի ճնշմանը ենթարկված միլիոնավոր մարդկանց համակրանքը շահելու գործում։

ՍՍՀՄ պատմության կեսդարյա ուղին վկայում է այն մասին, որ իր գոյության յուրաքանչյուր փուլում սովետական պետությունը թե՛ բարոյական, թե՛ նյութական ինտերնացիոնալ օգնություն է ցույց տվել աշխարհի առաջադեմ ուժերին, կապիտալիստական երկրների պրոլետարներին՝ կապիտալի լծի դեմ նրանց մղած պայքարի ամենասուր պահերին։

Աշխարհի ճակատագրի համար ՍՍՀ Միության ունեցած համաշխարհային-պատմական նշանակությունը առանձնապես ցայտունորեն արտահայտվեց համաշխարհային II պատերազմի ընթացքում և հետպատերազմյան տարիներին։ Սովետական Միությունը վճռական դեր խաղաց ֆաշիզմի ջախջախման գործում։ Մեծագույն զոհերի, չտեսնված մասսայական հերոսության գնով սովետական ժողովուրդը մարդկությանը փրկեց ֆաշիստական ստրկացման վտանգից։

Սովետական մեծ տերության օգնության շնորհիվ Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրներ կարողացան իրենց մոտ սոցիալիստական հեղափոխություն կատարել։ Հետագայում Սովետական Միության կողմից ժողովրդա-դեմոկրատական երկրներին ցույց տրված աջակցությունն օգնեց նրանց արագորեն ամրապնդել ձեռք բերած քաղաքական և սոցիալական նվաճումները, որը անհրաժեշտ պայմաններ ստեղծեց սոցիալիզմի կառուցմանն անցնելու համար։

Սովետական Միությունը սոցիալիստական երկրների համագործակցության, համաշխարհային սոցիալիստական սիստեմի պատվարն է։ ՍՍՀՄ և սոցիալիստական մյուս երկրների աճող հզորությունը իմպերիալիզմի կողմից հնշված երկրների պայքարի հաջող ելքի կարևորագույն նախադրյալը հանդիսացավ։ Այդ պայքարի հետևանքը եղավ գաղութատիրության փլուզումը. տասնյակ երկրներ ինքնուրույն զարգացման հնարավորություն ձեռք բերեցին։ Հանրահայտ է այն մեծ, անշահախնդիր օգնությունը, որ ցույց է տալիս Սովետական Միությունը գաղութատիրության լծից ազատագրված երկրներին։ Իրականացավ լենինյան կանխատեսումն այն մասին, որ ՍՍՀ Միությունում սոցիալիզմի կառուցման փորձը օրինակ կծառայի մյուս երկրների համար։ Ներկա դարաշրջանում փայլուն կերպով հաստատվեցին Լենինի այն խոսքերը, թե «միջազգային կարևորությունը կամ միջազգային մասշտարով կրկնվելու պատմական անխուսափելիությունը, ինչ որ եղել է մեղանում... բոլոր երկրներին ցույց է տալիս ինչ-որ բան, այն էլ չափազանց էական բան նրանց անխուսափելի և մոտալուտ ապագայից»[4]։

ՍՍՀՄ փորձը լայնորեն կիրառվում է եղբայրական սոցիալիստական երկրներում, բացառիկ կարևորություն է ստանում երիտասարդ ազգային պետությունների կյանքում, որոնք օտարերկրյա լծից ազատագրվելուց հետո կանգնած են զարգացման հետագա ուղիների ընտրության առաջ։

ՍՍՀ Միության կազմավորումն ու զարգացումը, նրա հաղթանակների պանծալի տարեգրությունը լիովին բացահայտում է մարքս-լենինյան ուս-

---

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 5, 6։

մունքի կենսատու ուժը և համոզիչ կերպով մերկացնում լենինիզմի ու միջազգային կոմունիստական շարժման վրա աջ և «ձախ» օպորտունիստների հարձակումների ողջ կեղծիքն ու սնանկությունը։

Ներկայումս սոցիալիստական երկրների իրավահավասար ընտանիքում ընդարձակվում և խորանում են տնտեսական համագործակցության ձևերը, ավելի լայնորեն են օգտագործվում աշխատանքի սոցիալիստական բաժանման հնարավորությունները։ Սոցիալիստական երկրների ժողովուրդները լի են միասնությունն ու համախմբվածությունը ամրապնդելու վճռականությամբ. փնտրում են համագործակցության ամենից ավելի ռացիոնալ ձևեր, որոնցից յուրաքանչյուր պետություն իր տնտեսության զարգացման համար առավելագույն օգուտ է ստանում։ Սոցիալիստական համագործակցության երկրները դարձել են աշխարհի ամենահզոր արդյունաբերական գոտին։ 1971 թ. Տնտեսական փոխօգնության խորհրդի երկրները ձեռնամուխ են եղել սոցիալիստական տնտեսական ինտեգրացիայի կոմպլեքսային ծրագրի իրագործմանը, որը նախատեսված է 15—20 տարվա համար. արդեն ձեռք են բերվել առաջին շոշափելի արդյունքները այդ վիթխարի ծրագրի իրականացման ուղղությամբ։ Սոցիալիստական երկրների համագործակցությունը նույնքան բարենպաստ է եղել դիտության և մշակույթի զարգացման, սոցիալիստական դեմոկրատիայի կատարելագործման համար։

Սովետական Միության հզորության աճը եղել է և շարունակում է մնալ միջազգային ասպարեզում ուժերի փոխհարաբերության փոփոխման, սոցիալիստական սիստեմի ներգործության ուժեղացման և համաշխարհային զարգացման վճռական ուժի վերածվելու կարևորագույն գործոնը։ Համաշխարհային սոցիալիստական սիստեմի ամրապնդումը Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների գլխավոր ներդրումն է համաշխարհային հեղափոխական պրոցեսի զարգացման մեջ նրա ներկա փուլում։ Կոմունիստական և բանվորական կուսակցությունների 1969 թ. միջազգային խորհրդակցությունում նշվեց, որ ՍՍՀՄ և մյուս սոցիալիստական երկրների նվաճումները լիովին համապատասխանում են ամբողջ աշխարհի ժողովուրդների արմատական շահերին և կապիտալիզմի ու գաղութատիրության լծից ազատագրված երկրների ժողովուրդների մեջ սոցիալիզմի գաղափարների պրոպագանդայի հզոր միջոց են ծառայում։ ՍՍՀ Միությունում կոմունիզմի կառուցումը արդի հեղափոխական ուժերի առջևից ընթացող սովետական ժողովրդի ինտերնացիոնալ մեծ խնդիրն է։

Գնալով աճում է Սովետական Միության՝ որպես ողջ մարդկության խաղաղության և առաջադիմության հուսալի պատվարի դերը։ Մեր երկիրը նվաճել է առաջադեմ մարդկության հիացմունքն ու երախտագիտությունը։ Այժմ ՍՍՀ Միությունը աշխարհին ներկայանում է որպես կառուցվող կոմունիզմի երկիր, որպես ժողովուրդների բարեկամության միջնաբերդ, որպես միջազգային հեղափոխական-ազատագրական շարժման հենարան։